**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ**
**ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**
**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

---

*26-ը նոյեմբերի 2025թ.* *ք. Երևան*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-08

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎՐԻՊԱԿԸ ՇՏԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, 10.2-րդ հոդվածի 24-րդ մասով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Արթուր Հովսեփյանի, Արուս Հայրապետյանի, Անդրանիկ Եղոյանի և Հարութ Ակլունցի կազմով՝

## ՈՐՈՇԵՑ

1. Շտկել Խորհրդի 2025թ. նոյեմբերի 18-ի որոշման վերնագրում թույլ տրված վրիպակը՝ «ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՄԽ-Ո-08» բառերի փոխարեն գրելով «ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՄԽ-Ո-07»:
2. Ամփոփել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուներ ընտրելու նպատակով 2025 թվականի նոյեմբերի 26-ին անցկացված մրցույթի արդյունքները (այսուհետ՝ Մրցույթ):
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հաղթող ճանաչել Վահե Մկրտչյանին:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի նախագահին:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ